REDEMOS

RECONFIGURING EU DEMOCRACY SUPPORT. TOWARDS A SUSTAINED DEMOS IN THE EU'S EASTERN NEIGHBOURHOOD

Քաղաքականության համառոտագիր 5

Ժողովրդավարական համախմբման մարտահրավերներն ու պահանջները Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում

Վասիլիս Կարոկիս-Մավրիկոս, Թեոֆանիս Էքսադակտիլոս և Լաուրա Չապելլ

Դեկտեմբեր, 2025

Funded by the European Union

The REDEMOS project has received funding from the European Union's Horizon Europe research and innovation programme under grant agreement No 101061738. The Associated Partner University of Surrey has received funding from UK Research and Innovation (UKRI) under the UK government's Horizon Europe funding guarantee under grant number 10040721. The Associated Partner University of St. Gallen has received funding from the Swiss State Secretariat for Education, Research and Innovation (SERI). Views and opinions expressed are, however, those of the author(s) only and do not necessarily reflect those of the European Union, UKRI and SERI. Neither the European Union nor UKRI or SERI can be held responsible for them.

Իրավիճակի նկարագրում

Մոլդովան և Ուկրաինան, և որոշ չափով՝ Հայաստանն ու Վրաստանը, ԵՄ արևելյան հարևանության քաղաքականության շրջանակում ավանդաբար ընկալվել են որպես ժողովրդավարացման ճանապարհին գտնվող երկրներ: Այնուամենայնիվ, ինչպես պնդում է քաղաքականության այս փաստաթուղթը, քաղաքական վարչակարգերը չպետք է դիտարկվեն որպես ստատիկ կամ միակուռ, այլ որպես դինամիկ և փոփոխվող համակարգեր: Հետևաբար, արդյունավետ և կարիքահեն ժողովրդավարական աջակցության նախագծման և իրականացման համար անհրաժեշտ է գնահատել տվյալ երկրի վարչակարգի ընթացիկ հետագիծը. արդյոք այն շարժվում է ժողովրդավարական համախմբման ուղղությամբ, թե արձանագրում է ավտորիտար շեղում, միաժամանակ հաշվի առնելով երկրի ժողովրդավարական հաստատությունների հասունությունը և վերջին միտումները ձևավորող գործոնները:

Այս նպատակով սույն քաղաքականության փաստաթուղթը համադրում է մակրո մակարդակի ժողովրդավարական ցուցանիշները փորձագիտական գնահատականների հետ, որպեսզի տրամադրի Մոլդովայում, Ուկրաինայում, Հայաստանում և Վրաստանում վարչակարգերի պայմանների և զարգացման ընթացքի վերաբերյալ արդի ախտորոշում: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս իրականացնել տարածաշրջանի ժողովրդավարական առաջատարների մանրամասն համեմատություն, բացահայտել քաղաքական միջամտություն պահանջող հիմնական խոցելի հարցերը և ձևավորել նպատակային առաջարկություններ ինչպես առանձին երկրների, այնպես էլ տարածաշրջանի մակարդակներում:

Հիմնական եզրակացություններ

- Տարածաշրջանում դիտարկվում են վարչակարգերի զարգացման չորս տարբեր ուղղություններ.
- Հայաստանում 2020 թվականից ի վեր արձանագրվում է ժողովրդավարական հետընթաց, ինչը արտահայտվում է դատական իշխանության անկախության շարունակական թուլացմամբ, ընտրական գործընթացների նկատմամբ վստահության պակասով և լրատվամիջոցների նկատմամբ գրաքննության ուժեղացմամբ:
- Վրաստանը մինչև 2022 թվականը եղել է կայուն ընտրական ժողովրդավարություն, սակայն ներկայումս անցնում է ժողովրդավարական վատթարացման փուլով, որը դրսևորվում է լրատվամիջոցների բազմակարծության նվազմամբ, կառավարության կողմից ապատեղեկատվության տարածման աճով և քաղաքացիական հասարակության գործունեության նկատմամբ սահմանափակումներով:
- Մոլդովան 2019-2022 թվականներին գրանցել է ժողովրդավարական առաջընթաց, հատկապես ընտրական և դատական ոլորտներում, սակայն այդուհետ ցուցաբերում է հետընթացի նշաններ՝ պայմանավորված հանրային թույլ վերահսկողությամբ, իրականացման բացերով և կառավարման սահմանափակ արդյունավետությամբ:
- Ուկրաինան պատերազմի պայմաններում դրսևորել է ինստիտուցիոնալ կայունություն և լիբերալ ժողովրդավարացման ինդեքսի ընդհանուր բարելավում, թեև պահպանվում են գործադիր իշխանության գերիշխման և դատական համակարգի քաղաքականացման հետ կապված մարտահրավերները:

Քաղաքականության վերաբերյալ առաջարկներ

- **Հայաստանի** դեպքում ԵՄ-ն պետք է վերագնահատի իր ներգրավվածությունը՝ առաջնահերթություն տալով տեխնիկական և ինստիտուցիոնալ աջակցությանը, որը կուղղվի ընտրական գործընթացներին, դատական իշխանության անկախությանը և լրատվամիջոցների ազատությանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի չիրականացված առաջարկությունների կատարմանը: Աջակցությունը պետք է կենտրոնանա կարողությունների զարգացման և կառուցվածքային քաղաքական երկխոսության վրա՝ հանրային վստահությունը վերականգնելու և ժողովրդավարական ձեռքբերումները ամրապնդելու նպատակով:
- **Վրաստանում** ժողովրդավարական հետընթացը հետ շրջելու համար անհրաժեշտ է ԵՄ-ի հետ համագործակցությունն ու աջակցությունն առավել հստակ կապել ընտրական ամբողջական գործընթացի, լրատվամիջոցների բազմակարծության, դատական անկախության և քաղաքացիական հասարակության գործունեության շոշափելի բարեփոխումների հետ: Պայմանական, սակայն կառուցողական մոտեցումը, որը կհամադրի տեխնիկական աջակցությունը և հստակ քաղաքական ակնկալիքները, էական նշանակություն կարող է ունենալ վստահության վերականգնման և ժողովրդավարական ինստիտուտների պաշտպանության տեսանկյունից:
- **Մոլդովայում** ԵՄ-ն պետք է առաջնահերթություն տա երկրի համամասնական ընտրական համակարգի պաշտպանությանը և ամրապնդի դատական հաշվետվողականությունը՝ ուժեղացված վերահսկողության, վեթինգի և թափանցիկության միջոցով՝ որպես անդամակցության պայմանների հիմնական տարրեր: Օրենքի գերակայությունը ամրապնդելու և ժողովրդավարական կառավարման նկատմամբ հանրային վստահությունը պահպանելու համար անհրաժեշտ է ապահովել թիրախային տեխնիկական աջակցություն ու սահմանել հստակ չափանիշներ:
- **Ուկրաինայում** ժողովրդավարական համախմբմանը աջակցելու նպատակով ԵՄ-ն պետք է խրախուսի այնպիսի բարեփոխումներ, որոնք կհավասարակշռեն գործադիր իշխանությունը, կամրապնդեն դատական անկախությունը և կուժեղացնեն վերահսկող ինստիտուտները, հատկապես հետպատերազմյան վերականգնման նախապատրաստական փուլում: Շարունակական պայմանականությունը՝ զուգորդված քաղաքացիական հասարակությանը, վերահսկող կազմակերպություններին և հետաքննող լրագրությանը տրամադրվող կայուն աջակցության հետ, վճռորոշ նշանակություն կունենա ժողովրդավարական հաշվետվողականության ամրապնդման համար:
- **Արևելյան հարևանության տարածաշրջանում** ժողովրդավարության աջակցության առաջնահերթությունները պետք է ուղղված լինեն վերջին ավտորիտար տեղաշարժին նպաստող գործոնների հաղթահարմանը՝ միաժամանակ օգտագործելով այն խթանները, որոնք նոր թափ են հաղորդում ժողովրդավարացմանը: Ներգրավվածությունը տարածաշրջանային և բազմակողմ մակարդակներում մշտապես առաջնահերթություն պետք է տա դատական անկախության և ընտրական ամբողջականության ամրապնդմանը, քանի որ դրանք շարունակում են մնալ հիմնական խոցելի ոլորտները Արևելյան հարևանության երկրների մեծ մասում՝ անկախ վերջիններիս ժողովրդավարական զարգացման ընդհանուր մակարդակից:

Ամբողջական հետազոտությունը՝ **ՌԵԴԵՄՈՍ-ի քաղաքականության փաստաթուղթ. Վարչակարգի խմբավորումները և ժողովրդավարացման մարտահրավերները Արևելյան հարևանության երկրներում. Հայաստան, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա,** հասանելի է հետևյալ հղումով՝ Policy Papers – REDEMOS

REDEMOS: REconfiguring EU DEMOcracy Support.
Towards a sustained demos in the EU's Eastern Neighbourhood

REDEMOS- 101061738
HORIZON-CL2-2021-DEMOCRACY-01-04

Dr Mădălina Dobrescu, NTNU
info@redemos.eu

redemos.eu @REDEMOS_eu REDEMOS Horizon Europe Project